



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԵԱՀԿ գործող նախագահը կոչ է անում Հայաստանին շարունակել բարեփոխումները՝ խաղաղության հաստատման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի հիմքի վրա

ԵԲԵՎԱՆ, 3 հուլիսի 2009 - ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի արտգործնախարար Դորա Բակոյանիսը այսօր կոչ արեց Հայաստանին օգտագործել այն դրական հնարավորությունը, որը ձեռք է բերվել Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում և կարևորեց ընթացող ժողովրդավարական բարեփոխումները:

«Հայաստանը կարևոր դեր ունի Հարավային Կովկասի կայունության գործում: Ներպետական հարցերում քաղաքական բարեփոխումների շարունակմանը համընթաց՝ երկիրը նախաձեռնել է զգայուն երկխոսություն Թուրքիայի հետ», - ասաց նա Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումից հետո:

Բակոյանիսը նշեց, որ տարածաշրջանի ձգձգված կոնֆլիկտների խնդրին անդրադառնալը Հունաստանի նախագահության կարևորագույն առաջնահերթություններից է:

«Արդեն ավելի քան մեկ տարի է՝ Հայաստանը և Ադրբեջանը բարձր մակարդակով կառուցողական մասնակցություն են ունեցել բանակցությունների նոր փուլում, որը հույս է ներշնչում: Բանակցությունները վճռորոշ փուլում են», - ասաց նա:

«Ինձ հուսադրում է երկու կողմերի քաղաքական կամքը և Մինսկի խմբի՝ դրական արդյունքներ ձեռքբերելու պատրաստակամությունը »:

Իր այցի ընթացքում Բակոյանիսը հանդիպումներ ունեցավ Նախագահ Սերժ Սարգսյանի, արտգործնախարար Նալբանդյանի, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, Լեռնային Ղարաբաղի ղեկավար Բակո Սահակյանի հետ, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների՝ ներառյալ՝ ընդդիմադիր «Հայ Ազգային Կոնգրեսը» ներկայացնող Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ:

Բակոյանիսն առանձնացրեց Հայաստանի և ԵԱՀԿ միջև համագործակցությունը՝ մասնավորապես ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ, որի նոր շենքի պաշտոնական բացումը տեղի ունեցավ գործող նախագահի այցի շրջանակներում:

«Այսօր նշում ենք ԵԱՀԿ նոր գրասենյակի բացումը Երևանում: Հատկապես կարևոր է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համագործակցությունը Հայաստանի հետ բարձր մակարդակով»: - ասաց նա. «Հավատացած եմ՝ կարող ենք խորացնել այս համագործակցությունը: Գրասենյակը այստեղ է՝ ծառայելու Հայաստանի ժողովրդին և աջակցելու կառուցել բաց, ազատ և ժողովրդավար հասարակություն՝ համընթաց առավել ուժեղ քաղաքացիական հասարակության հիմքեր դնելուն՝ հասարակության, որը կպահպանի հարգանքը անցյալի նկատմամբ և պատրաստ կկանգնի՝ ապագան վերցնելու իր ձեռքը»:

ԵԱՀԿ գործող նախագահը չորեքշաբթի և հինգշաբթի գտնվում էր Բաքվում՝ բանակցություններ վարելու Ադրբեջանի իշխանությունների և քաղաքական կուսակցությունների հետ:

Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության հարցերով ավագ օգնական Գայանե Տեր-Ստեփանյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 22 96 10/ 11/12/13/145407, քջջ. (091) 012603.